Ազգասիրական գիրքերի եւ տանաւորների ժողովածուների հրատարակութիւնը առաջ քաղաքագիտական դրդիչներով էր թոյլատրւում, իսկ 1905 թուին յեղափոխական գրականութիւնը եւ հին շրջանի ծածուկ հրատարակութիւնները ու ձեռագիրները մանր տետրակներով տպագրուած հազարաւոր օրինակներով տարածւում են ամբոխի մէջ։ Ընդհանուր հայկական մտքի միութեան փորձը մի պայմանական ընկերութիւն հաստատելու առաջարկութեամբ է առաջ հանդէս գալիս, որը չի էլ իրագործւում քաղաքական տեսակէտներով, իսկ 1905 թուին հայկական միտքը ամբողջանում է շարժուելով յայսկոյս եւ յայնկոյս Յորդանանու միեւնոյն յորդորով, յանձին մի կազմակերպութեան, որ ժողովրդական դարաւոր պահանջի արդիւնք է։ Հասարակական կեանքը միակողմանի սոսկ քաղաքակրթական ուղղութեամբ իւր ընթացքի մէջ տուժում էր առաջ, ստէպ ստէպ խառնուած հանդիսանալով քաղաքականութեան առաջ եւ փուչ յոյսերի զգացմամբ յետ ընդդրկուելով, 1905 թուին քաղաքակրթական բոլոր տարրերը ժողովրդական ազատութեան ինքնուրոյնութեան մէջ ամփոփուեցին, իսկ այսպիսի ամփոփումը քաղաքական մտքի եւ կեանքի շրջափոխութեան հիմնաքարը դարձաւ․ այդ եղանակով վերացաւ միակողմանիութիւնը, որ հին շրջանին յատուկ էր, եւ նրա փոխարէն հաստատուեց ամբողջացած ասպարէզ գործունէութեան ազատ մտքի եւ ազատ կամքի։

Այս է 1906 թուի նախօրեակի առաւելութիւնը հանդէպ այն «փառաւոր» շրջանի, որ կովկասահայը ունէր 1880ական թուերին։ Այդ առաւելութիւնն է այն բոլոր սկանդալների սկզբնապատճառը, որոնք 1906 թուին առանձնայատուկ էին, եւ որոնք մինչդեռ բացարձակ չարիք են ըստ հայեցման յաղթահարելի, բայց յարաբերական բարիք են նաեւ ըստ չափու յաղթահարողի։ 1906 թուի հաշուետարին ճիշդ հասկանալու համար այդ առաւելութիւնը գիտակցել անհրաժեշտ է․ անհրաժեշտ է մանաւանդ մտածելու համար այն հնարաւոր ապագան, որ 1906 սկանդալաշատ տարու կերպարանքից իսկ արտափայլում է։

ԳՐ. ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ ՅԷՋՆ 204

## ՂՈՒԿԱՍ Վ. ԽԱՐԲԵՐԴՑԻ

Հանդիսիս ներկայ թուոյս մէջ (էջ 204) խօսելով Հ. Գալէմքեարեանն Ղուկաս Վ. Խարբերդցւոյ թարգմանութեանց վրայ, անորոշ կը տեսնէ Գիրք Խաբէութեանց գործոյն («չարադրեցեալ է Թէօդորոս Ճէննար տէ Վերիեր եպիսկոպոսէ») թարգմանութեան ժամանակն։ Ի լուսաւորութիւն այս կէտին ի մէջ կը բերենք նոյն գրոցս Ա. հատորի Յիշատակարանն (Ձեռ. մեր Մատենադարանի, անթիւ) հետեւեալ տողերը․

«Գիրքս այս, որ կոչի Խաբէութիւն աշխարհի, են ք հատորք. զմինն առաջնոյն Աստուծով, որ է Ա. հատոր. եւ զմիւսն թարգմանեցից եմ նորին օգնութեամբն խնամակալին շնորհօք օժանդակութեամբ եւ զոյգիւք Յոհաննէս եպիսկոպոսի եւ պատրիարգի մայրաքաղաքին Կոստանդնուպօլսոյ … միջնորդութեամբ Յակոբ աստուածաբան վարդապետի եւ եպիսկոպոսի … ես Ղուկաս ձեռին վարդապետս Խարբերդցի որդի Աբրահամու ի տոհմէն Գառպարեան, յորժորժեալ թարգմանեցի նոյնոյ պատրիարգի։ Թուին Քրիստոսի 1730, ի ժամանակի ապստամբութեան այլազգեաց ընդդէմ իշխանին իւրեանց»․ — Բ. հատորին Յիշատակարանն ըստ մեր Օրինակին չունի թուական։

ԽՄԲ. «ՀԱՆԴԻՍԻ»

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ — Գերյ. Հ. Նիկողայոս Թ. Ծ. Վ. Աւգերեան † (պատկերազարդ). 193: — Սարգիս արքեպ. Սարաֆեան. 195: — Սարգիս արքեպ. Սարաֆեան եւ իւր ժամանակը 1720-1775. (պատկերազարդ). 196:

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Մխիթար Գօշի Դատաստանագիրքը եւ Հայոց հին քաղաքացիական իրաւունքը. 206:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ — Հին Հայոց տեղւոյ անունները. 211:

ԳՐԱԿԱՆ — Վիմի քարոզն Մ. Այրիվանեցւոյ ժամանակագրութեան մէջ. 213: — 1906 թիւը Կովկասահայ կեանքում. 214: — Ղուկաս Վ. Խարբերդցի. 224:

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ

Հ. ՌԱՓԱՅԷԼ Վ. ՊԱՐՈՆՉ

ՎԻԷՆՆԱ, ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

digitised by A.R.A.R.@